

## Մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունեց Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավարին

25.09.2014

Սեպտեմբերի 25-ին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունեց Հայաստանում  
Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Յրիսթեան: Հանդիպման  
ընթացքում պատվիրակության ղեկավարը ներկայացրեց Հայաստանում ԵՄ գործունեությունը եւ,  
մասնավորապես, Արագածոտնի մարզում իրականացված ծրագրերը:

Նշվեց, որ կրթական, գյուղական համայնքների զարգացման եւ այլ ծրագրեր են իրականացվել  
Թալին քաղաքում ու մարզի մի քանի գյուղական համայնքներում: Տրայան Յրիսթեանը մարզպետին  
ներկայացրեց գործողությունների այն նոր շրջանակը, որը նախատեսվում է առաջիկա իրենց  
ծրագրերում եւ առաջարկեց դրանց իրականացման համատեղ քննարկում:

Մարզպետն իր հյուրին ներկայացրեց Արագածոտն մարզի ընդհանուր նկարագիրը: Նշեց, որ այն  
առանձնանում է թե՛ իր բազմաշերտ կլիմայական առանձնահատկություններով՝ գտնվելով լեռնային  
եւ նախալեռնային գոտիներում, եւ թե՛ բնակչության նկարագրով: Քանզի, այստեղի բնակչությունը,  
մեծամասամբ, Մեծ եղեռն ապրած, թուրքական յաթաղանից մազապուրծ եղած գաղթականների  
ժառանգներն են եւ կրում են իրենց պապերին բաժին ընկած ճակատագրի ողջ հետեւանքները:  
Քաղաքական դաշտից մարզպետն անցում կատարեց տնտեսական ոլորտ եւ ներկայացրեց մարզում  
առկա հիմնախնդիրները: Համատեղ քննարկումից հետո պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ  
Եվրամիության պատվիրակության առաջիկա գործունեության մեջ կներառվեն գյուղատնտեսական,  
կրթական, մշակութային, ձեռնարկատիրական, զբոսաշրջության ոլորտներին վերաբերող ծրագրեր:  
Համագործակցության մեջ կընդգրկվեն քաղաքային եւ գյուղական համայնքները, մարզային  
կառույցները, հասարակական կազմակերպությունները: